ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇԻՉ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԸՍՏ ՎԱՀԱԳՆ ՏԱՏՐՅԱՆԻ

Ի տարբերություն ցեղասպանության վերաբերյալ ներկայումս գոյություն ունեցող բազմազան տեսակետների, ամերիկահայ պատմաբան Վահագն Տատրյանը «Հայոց ցեղասպանության որոշիչ դրդապատճառները»՝ փոքրածավալ աշխատության մեջ առաջադրում է մի տեսակետ, որն օգտակար է ոչ միայն հայոց, այլև ցեղասպանության մի շարք այլ դեպքերի լուսաբանման համար: Իր մեկնակետի հիմքում դնելով ցեղասպանության առաջացման պայմանները՝ նա առաջ է քաշում չորս որոշիչ դրդապատճառ. 1. երկարատև կոնֆլիկտի գոյություն, 2. ուժային անհամաչափ հարաբերություններ, 3. հնարավորության մեխանիզմ, 4. կոնֆլիկտը կազմակերպված և համատարած բռնությամբ լուծելու արմատական փորձ (էջ 1-2):

Հայոց ցեղասպանության ուսումնասիրության հիմքում ընկած են այն հավաստի աղբյուրները, որոնք լույս են սփռում հայոց մեծ սպանդի մութ էջերի վրա: Դրանցից ամենասակավը (սակավը, որովհետև գրանք սիստեմատիկաբար ոչնչացվել են), բայց հավաստին, թուրքականն է: Թուրքերի կողմից հայոց ցեղասպանության ժխտմանը հակազդելու համար Վ. Տատրյանը շեշտը գնում է փաստերի անվիճարկելիության վրա, որոնք նա որակում է չորս կարևոր բաղադրատարրով: Դրանք են՝ 1. արժանահավատություն, 2. ճշգրտություն, 3. անհերքելիություն, 4. ստուգման ենթակա լինելու հնարավորություն: Անտանտի պետությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արխիվային նյութերը համարելով այս բաղադրատարրերի որոշ կողմերին անհամապատասխան, մասամբ դրանք որակելով որպես քարոզչական, և հայ վերապրածների հազորդագրությունները բնութագրելով զոհ լինելու տեսանկյունից կասկածելի, ընդունելով մեթոդաբանական այս ծայրահեղությունը, բայց հավաստի տեսություն ստեղծելու անհրաժեշտությունը՝ Տատրյանը սահմանում է երեք կատեգորիա: Առաջին. պատահականորեն և սակավորեն պահպանված թուրքական պաշտոնական փաստաթղթեր: Դրանց մեծ մասն օգտագործվել է թուրքական ռազմական դատարանի կողմից հայերի դեմ «բռնագաղթի և կոտորածների» հետ կապված ու համարվում է իրավաբանորեն անհերքելի և անառարկելի: Թուրքական պաշտոնական փաստաթղթերի երկրորդ խումբն ընդգրկում է թուրքական խորհրդարանի ստորին և վերին պալատներում հայոց «բռնագաղթի և կոտորածների» հարցի վերաբերյալ կայացած քննարկումները, որոնք համընկան Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին: Փաստաթղթերի անհերքելիության տեսանկյունից ուշագրավ են ստորին պալատի Հինգերորդ կոմիտեի հետաքննչական հանձնաժողովի բացահայտումները (էջ 2-3): Ապացույցների հաջորդ երրորդ, խմբին են վերաբերում Թուրքիայի դաշնակիցներ Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի արխիվներում պահվող նյութերը: Պետք չէ գերագնահատել դրանց արժեքը, քանզի դրանք մեծ մասամբ լեցուն են թուրքական պաշտոնական այն կեղծ հորջորջանքով, թե իբր հայերի նկատմամբ կիրառված «միջոցառումները» կազմակերպված էին լոկ վերջիններիս հրահրած ապս-

---

1 V a h a k n N. D a d r i a n. The Determinants of the Armenian Genocide, Yale Center for International and Area Studies, Working Paper GS 02, 1998, 28 p. *(այսուհետև հղումները տե՛ս տեքստում).*

տամբության, լրտեսության և դավաճանական գործողությունների դեմ: Թուրքիայի դաշնակից պետությունների հաղորդագրությունները, որոնք կրում էին «գաղտնի» կամ «գերգաղտնի» դրոշմը, ի սկզբանե ենթակա չէին հրապարակման, բայց, իրենց մեջ պարունակող սահմռկեցուցիչ մանրամասնություններից ելնելով, անգլիացի պատմաբան Առնոլդ Թոյնբիի կողմից բնութագրվեցին որպես «հսկայածավալ հանցագործություն»: Հրապարակման ենթակա չլինելու փաստը այդ նյութերին հաղորդում է ինչպես վստահելի, այնպես էլ անհերքելի ապացույց լինելու հատկություն:

Մեթոդաբանական հուսալիության ամենաբարձր չափանիշը բխում է թուրքական անհերքելի և նրա դաշնակիցների վստահելի փաստագրական նյութից: Այս փաստաթղթերի արժանահավատությունը, ճշգրտությունը, անհերքելիությունը և ստուգման ենթակա լինելը հեղինակի կարծիքով այն կարևորագույն գենքն է, որը կարող է հակազդել ոչ միայն հայոց ցեղասպանության թուրքական ժխտման ամբողջ համակարգին, այլ նաև զրկել իրավական ուժից: Փաստագրական այս հարուստ նյութի հիման վրա էլ Վ. Տատրյանը ներկայացնում է հայոց ցեղասպանության իրականացման որոշիչ դրդապատճառների սկզբունքային ելակետերը (էջ 4-5):

Առաջին դրդապատճառ համարելով կանխամտածվածությունը, Վ. Տաարյանը հակադրվում է այն բոլոր պնդումներին, որ, իբր, հայերի դեմ ձեռնարկված «միջոցառումները» պատերազմական ժամանակաշրջանի ճգնաժամի և ծայրահեղությունների արդյունք են և դրանք պետք է քննարկել այդ հանգամանքների համատեքստում (էջ 5): Թուրքական և գերմանական փաստաթղթերը անհերքելիորեն ապացուցում են հայոց ցեղասպանության կանխամտածված լինելու բոլոր պայմանական մանրամասները: Թուրքական ռազմական դատարանի գլխավոր մեղադրական ակտում բժ. Նազիմը բնութագրվում է որպես մարդ, որը դեներալ-նահանգապետներին ուղարկած իր գաղտնի հրահանգներում հակահայկական միջոցառումները մեկնաբանել է որպես «կանխապես դրդված՝ երկարատև և խոր կշռադատություններով»: Բայբուրդի, Յոզղաթի, Տրապիզոնի և Երզնկայի դատական գործընթացների ժամանակ հանցագործությունները համարվեցին «կանխամտածված» հիմք ընդունելով օսմանյան քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը, որը կանխամտածված սպանության համար նախատեսում է մահապատիժ: Կանխամտածվածության խնդիրը լուսաբանվել է նաև Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուի օրագրում: Ահա թե ինչ է գրում նա 1915 թ. օգոստոսի 3-ին՝ մեջբերելով Թալեաթի հետևյալ խոսքը. «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հանգամանալից քննարկել է խնդիրը իր բոլոր մանրամասնություններով... և այն քաղաքականությունը, որ իրենք հետապնդում են, այն է, ինչը պաշտոնապես ստեղծվել է... որպես երկարատև և մանրազնին դատողությունների արդյունք» (էջ 6-7):

Հայոց ցեղասպանության իրականացումը պայմանավորող հաջորդ որոշիչ դրդապատճառը մտադրությունն է: Այստեղ կանխամտածվածության և մտադրության գործոնները հանդես եկան փոխկապակցված և միահյուսված: Ցեղասպանություն իրականացնելու մտադրությունը ապացուցում են և՛ թուրքական, և՛ գերմանական փաստաթղթերը: Յոզղաթի ռազմական դատարանը նույնպես հաստատեց այն՝ իր գլխավոր մեղադրական ակտում մեջբերելով բժ. Նազիմի այն միտքը, թե հակահայկական «միջոցառումները» նպատակադրված էին «լուծելու արևելյան (այսինքն՝ Հայկական) հարցը» (էջ 7): Ցեղասպանության իրականացման մտադրվածության և կանխամտածվածության փաստերն անհերքելիորեն և ճշգրիտ հիմնավորեց 1916 թ. թուրքական 3-րդ բանակի հրամանատար Մեհմեդ Վեհիբը: Նրան նախորդած Մահմուդ Քյամիլը արդեն 1915-1916 թթ.

հասցրել էր ոչնչացնել ենթակա հայկական վիլայեթների ազգաբնակչությանը, չնայած մնում էին հայ շինարարական մի շարք ջոկատներ: Բաղդադի երկաթուղու շինարարության համար և զինվորական իշխանությունների խնդրանքով Մեհմեդ Վեհիբը 1916թ. ամռանը հրամայեց Սվազից Բոզանդի Ադանայի շրջակայք տեղափոխել 2000 հայ բանվոր: Նրանցից ոչ մեկը տեղ չհասավ: Պարզվեց, որ նրանք ոչնչացվել էին Կիզիլդերեի հովտում: Ռազմական դատարանի միջոցով Վեհիբը կախաղան բարձրացրեց փոխադրման համար պատասխանատու ոստիկանության հրամանատար կապիտան Նուրիին և Հատուկ կազմակերպության ղեկավար Զերքեզ Գադիրին (էջ 8): Ավելին, Վեհիբը ռազմական դատարանին հանձնեց Սվազի գեներալ-նահանգապետ Ահմեդ Մուամերին, որը, սակայն, Թալեաթի կողմից ազատվեց և նշանակվեց Կոնիայի վալի: Պարզվում է, որ Մեհմեդ Վեհիբը նույնիսկ մտադրություն ուներ դատարանի առջև պատասխանատվության ենթարկելու բժ. Շաքիրին և բժ. Նազըմին: 1918թ. ռազմական դատարանին ուղղած իր զեկուցման մեջ Վեհիբը Շաքիրին որակում է որպես մարդ, որը «նշանակեց և անդամակցեց 3-րդ բանակի հրամանատարության շրջանում մարդկային էակների զահիճներին... Նա կազմակերպեց ինչպես կախաղաններ, այնպես էլ ժանդարմներ և ոստիկաններ արյունոտ ձեռքերով և ոչքերով»: Դատարանում Վեհիբը ընդհանրացրեց. «Հայերի կոտորածը և բնաջնջումը ու նրանց ունեցվածքի կողոպուտը և հափշտակությունը իթթիհադական Կենտրոնական կոմիտեի ընդունած որոշումների արդյունքն էր... Վայրագությունները իրականացվեցին համաձայն մի ծրագրի, որը սահմանվել և ընդգրկել էր կանխամտածվածության հաստատուն դեպքեր» (էջ 9-10):

Վ. Տատրյանը ցեղասպանության կազմակերպումը և ղեկավարումը համարելով հատուկ ուսումնասիրության առարկա այն լուսաբանում է առանձին ենթագլխի մեջ: Նրա կարծիքով ոչ ցեղասպանության կանխամտածվածությունը և ոչ էլ գա իրականացնելու որոշումը բավարար չեն այն նյութականացնելու համար: Կարճ ասած անհրաժեշտ են անդութ և անվարան կատարողներ (ֆունկցիոներներ): Հարցի ուսումնասիրությունների մեջ, ըստ հեղինակի, պատշաճ չի բացահայտվում իթթիհադական կուսակցության խաղացած վճռորոշ դերը: Իթթիհադը իր ծրագրերի իրականացման համար նշանակեց հետևյալ երեք կուսակցական պաշտոնյաների՝ 1. պատասխանատու քարտուղարներ, 2. պատվիրակներ, 3. գլխավոր հսկիչներ: Այս պաշտոնյաների հիմնական գործը նահանգներում վարչական մարմինների նկատմամբ հսկողության իրականացումն էր: Նրանց ենթակա էին նույնիսկ գեներալ-նահանգապետերը (էջ 10): Լինելով կուսակցական աստիճանակարգում միջանկյալ օղակներ և հրահանգավորվելով մայրաքաղաքում գտնվող Կենտրոնական կոմիտեի շտաբ-բնակարանից, նրանք բոլորն էլ իրենց պաշտոններին էին նշանակվել բծախնդրորեն և որպես կանոն նախկին զինծառայողներ էին: Ճանաչելով կուսակցական նահանգային այս կամակատարների առանցքային դերը, ռազմական դատարանը նրանցից շատերին դատեց «Պատասխանատու քարտուղարների դատ» կոչված առանձին դատական շարքով (էջ 11):

Էրզրումում գերմանական փոխհյուպատոս Շոյքներ–Ռիխտերը 1915 թ. իր «գաղտնի» զեկուցման մեջ բացահայտում է իթթիհադականների «բնաջնջման քաղաքականության» հանգամանալից մանրամասները: Պարզվում է, որ այդ տարածքների հիմնական ռազմական ուժերի, այսինքն՝ 3-րդ բանակի, հրամանատար Մահմուդ Քյամիլը համագործակցում էր այն ամենի հետ, ինչը փոխհյուպատոսը անվանում է «կոմիտե և նրա մթին ու մշուշապատ մարդիկ», ավելացնելով. «Իմ կարծիքով չկա որևէ ապացույց, որ հայերը պատրաստել են ընդհանուր ապստամբություն», հակահայկական «միջոցառումները» այլակերպվեցին «վրիժառության, բնաջնջման և կողոպուտի արշավանքի» (էջ 12):

Հայոց ցեղասպանության մեջ Իթթիհադականների խաղացած ամենաառանցքային դերի մասանանշումը թերևս պարունակվում է գերմանական դեսպան Վոլֆ Մեսերնիխի 1916 թ. հունիսի 30-ին արտաքին գործերի նախարարին հղած զեկուցագրի մեջ. «Այլևս ոչ ոք իշխանություն չունի զսպելու վիշապային բազմագլուխ կոմիտեն և ուղեկցող շովինիզմն ու ֆանատիզմը: Կոմիտեն պահանջում է հայերի վերջին մնացորդների բնաջնջումը, և կառավարությունը պետք է զիջի: Կոմիտեի իշխանությունը չի սահմանափակվում միայն օսմանյան մայրաքաղաքով, որտեղ Իթթիհադը կազմակերպված է և գործում է որպես իշխող կուսակցություն: Կոմիտեի իշխանությունը հասնում է բոլոր նահանդներին: Կուսակցության ներկայացուցիչ նշանակված է ցանկացած նահանգային վարչակազմի աշխատակցին կից, վալիից սկսած մինչև կայմակամը՝ օգնության կամ ղեկավարման նպատակով... Թուրքիֆիկացիա նշանակում է սանձարձակություն՝ արտամղելու, սպանելու կամ ոչնչացնելու այն ամենը, ինչ թուրքական չէ և բռնի տիրանալու ուրիշի բարիքներին... » (էջ 13):

Ցանկացած մասսայական սպանության հաջողությունը պայմանավորված է այն ծրագրով, որով առաջնորդվում է նրա հեղինակը: Ո՛չ կանխամտածվածությունը և ցեղասպանության մտագրությունը, ո՛չ էլ անդամ ցեղասպանության իրականացման մանրազնին կազմակերպումը՝ այն պայմանները չեն, որոնք ցեղասպանության վերջնական հաջողության երաշխիք են: Ըստ Վ.Տատրյանի, կա մեկ կարևոր պայման, որն իր բնույթով վճռորոշ է և ամբողջացնում է ողջ մեխանիզմի տարրերը: Այդ պայմանը ներառում է կադրերի ապահովումը, որոնց առաքելությունը ընթացիկ սպանությունների կազմակերպումն ու ղեկավարումն է: Այս մարդիկ ընտրվում են բծախնդրորեն՝ պայմանավորված իրենց մահասփյուռ բռնության հակումներով, անգթության և գաժանության խառնվածքով (էջ 14): Իթթիհադական կուսակցության ղեկավարներ բժ. Նազրմը և բժ. Շաքիրը երկար մտորումներից հետո հանդեցին մի որոշման, որն աննախադեպ է մարդկության պատմության ողջ ընթացքում: Նրանք որոշեցին բանտերից ազատ արձակել տասնյակ հազարավոր «արյունախում ոճրագործների»: Անօրինակ օրինազանցությունը իրավական տեսքի բերելու համար թուրքական պատերազմական նախարարությունը խորհրդարան ուղարկեց գնդապետ Բեհիկ Երգինին, իսկ արդարադատության նախարարությունը՝ ավագ խորհրդական Յուսուֆ Քեմալին: Արանք պետք է համոզեին պատգամավորներին, որ բանտարկյալները ծառայելու են իրենց հայրենիքին: Բայց իրավական փաստաթուղթը խեղաթյուրվեց երկու պատճառով՝ 1. օրենքի ընդունումը կատարյալ խաբեության արդյունք էր. պատճառաբանվում էր, որ բանտարկյալները պետք է ծառայեն կանոնավոր բանակում, և 2. այն օրենքի ուժ ստացավ միայն հակահայկական գործողությունների մեջ վերջիններիս ընդգրկվելուց շատ հետո (էջ 15):

Հատուկ կազմակերպության գործողությունները այն աստիճան դաղտնի էին պահվում, որ նույնիսկ նախարարները դրանցից անտեղյակ էին: Այն գաղտնի մարմին էր՝ ծրագրավորված հասնելու օսմանյան պետության ներքին և արտաքին անվտանգությանը: Նրա լիազորություններըր մասամբ գերազանցում էին կառավարության հնարավորությունները: Արդարադատության նախկին նախարար Իբրահիմի հավաստմամբ Հատուկ կազմակերպության մեջ բանտարկյալների ընդգրկումը ղեկավարում էր բժ. Նազրմը: Վերջինս Հատուկ կազմակերպությունը որակում էր որպես «իր մարդասպանների բանակի» կազմակերպչական հենք: Գործողությունների մեթոդը շատ պարզ էր. այս հրոսակախմբերը տեղակայվում էին հատուկ վայրերում և զոհերի՝ Միջագետք հասնելուն պես, հարձակվում ու անողոքաբար մորթում էին բոլորին (էջ16):

Թուրքական ռազմական դատարանը իր գլխավոր մեղադրական և այլ որոշումների մեջ ճանաչելով այս փաստը, Հատուկ կազմակերպությու-

նը որակեց որպես հայերի դեմ ուղղված կոտորածների սկզբունքային գործիք, միաժամանակ ընդգծելով Կենտրոնական կոմիտեի որոշիչ դերը այդ գործիքը կռելու մեջ (էջ17):

Ի մի բերելով իր ուսումնասիրության արդյունքները, Վ. Տատրյանը հանգում է հետևյալ կարևոր եզրակացությունների: Առաջինն այն է, որ հայոց ցեղասպանության կազմակերպման ամենացայտուն չափանիշը դա միաձուլյ կուսակցության դերն է (էջ18): Իր եզրակացության մեջ գիտնականը մաթեմատիկական մի բանաձևով առաջարկում է առկա փաստերից բացահայտել հայոց ցեղասպանության անհայտ դրդապատճառը: Որպես եզակի ուսումնասիրության արժանի հիմնախնդիր, հայոց ցեղասպանությունը, Վ. Տատրյանի կարծիքով, նշանակալից է հրեական ողջակիզման հետ հարաբերելու տեսանկյունից հայոց ցեղասպանության առաջնակարգ չափանիշի, այսինքն հայոց ցեղասպանության կոնցեպցիայի, նրա որոշման, իրականացման և կազմակերպման մեջ միատարը կուսակցության վճռորոշ դերի պարզաբանման համար: Նացիստական կուսակցության խաղացած դերը բավականաչափ զուգադրելի է իթթիհադականի հետ, ուստի մեկ հայտարարի հանգելը քաղաքական միատարը կուսակցությունների առաջնահերթ ցեղասպան դերի բնութագրի ընդունումը, լիովին տրամաբանական է (էջ 19): Իսկ ավելի ծայրահեղն այն փաստն է, որ կուսակցությունը, տիրանալով պետական մարմիններին, հսկում է վերջիններիս, և պետությունը դառնում է կուսակցության գաղափարական շահերի և նպատակների իրականացման գործիք:

Նացիստական և իթթիհադական կուսակցությունների կազմակերպչական կառուցվածքը այնպիսին էր, որ նրանց ղեկավարները կարող էին անվերապահորեն հենվել միջանկյալ օղակները զբաղեցնող նվիրյալ կամակատարների վրա, որոնց իրավասությունը երբեմն գերազանցում էր բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների լիազորությունները: Ազգային անվտանգությունը, ոստիկանությունը և մնացած ողջ համակարգը օգտագործվում էր կուսակցական այս մոլեռանդ և ընտրյալ գաղափարական հետևորդների կողմից: Հսկա մեխանիզմի այս ամբողջությունը կարող էր խժռել իր ճանապարհին գտնվող ամեն ինչ: Ցեղասպանության իրականացման որոշիչ դրդապատճառներից անմասն չէ նաև հնարամտորեն մշակված պարգևատրման համակարգի դերը, որը հանցանք իրականացնելու պատրաստակամությունը բարձրացնում է մի դերաստիճանի: Հոգեբանական այս գործոնը նվազեցրեց ոճրագործների խղճի խայթը և կանխեց մեղքի զգացմունքը (էջ 22): Հետևաբար, պրոֆ. Վ. Տատրյանը գանում է, որ երկու ցեղասպանությունների վերլուծությունը պետք է կանխապես խարսխել այդ կուսակցությունների ծագման, կառուցվածքի, ղեկավարության, պարգևատրման համակարգի և բացահայտ ու գաղտնի ծրագրերի վրա, որոնք համարվում են երկու ցեղասպանությունների ակնհայտ դրդապատճառները: Ինչպես հայոց ցեղասպանության, այնպես էլ հրեական ողջակիզման թիրախավորված բնակչությունը մեծապես զոհ դարձավ արդյունք հանդիսանալով այս երկու կուսակցությունների և պետական մարմինների միջև եղած փոխգործողությանը:

Ցավոք, Վ. Տատրյանի աշխատությունը զերծ չէ ժամանակակից արևմտյան քաղաքագիտության և սոցիոլոգիայի ներգործությամբ պայմանավորված գիտական պատմականության աշխարհայացքային և հայեցակետային շեղումներից: Իր առջև խնդիր դնելով բացահայտելու հայոց ցեղասպանության գաղափարական և իրավական ակունքների դրդապատճառները, ուսումնասիրության հեղինակը «ակամա» մխրճվելով հաճախ իրարամերժ թվացող փաստերի լաբիրինթոսում, ջանացել է շեղումներ կամ տատանումներ նշմարել թուրքական պետական քաղաքականության երիտթուրքական կառավարության գործելակերպի և «Իթթիհադի» կարգադրիչ գործունեության միջև: Հայոց ցեղասպանության ամբողջ մեղքը

կամ մեղքի մեծ բաժինը միայն «Իթթիհադին» վերագրելու, կենտրոնական կառավարության և նրա տեղական մարմինների գործունեությունն այդ ուղղությամբ կրավորականակերպ ներկայացնելու կամ գնահատելու փորձերը անհիմն են, քանզի վաղուց պատմագիտության կողմից հիմնավորված է, որ և՛ «Իթթիհադը», և՛ կառավարությունը միակամ ծառայել են հայոց ցեղասպանության թուրքական պետական քաղաքականությանը. հարկավ, պետական կառավարման բուրգի գագաթին «Իթթիհադն» էր:

«Իթթիհադի» կողմից որոշումների ընդունումը և կառավարության կողմից դրանց անշեղ կամ երբեմն էլ շեղ գործադրումը հետապնդում էր մի նպատակ՝ ըստ ամենայնի իրագործել հայոց ցեղասպանության՝ «Իթթիհադից» տակավին շատ առաջ թուրքական պետականության մշակած ծրագիրը: Այս է ճշմարտությունը: Եվ այս ճշմարտությունից ամեն մի շեղում, մեղմ ասած, մոլորություն է:

Վահագն Տատրյանի աշխատությունը շարադրված է փաստագրական նյութի և պատմագիտական վերլուծության հիման վրա: Այս աշխատությամբ նոր լույս է սփռվում հայոց ցեղասպանության պատմության դրդապատճառների բացահայտման վրա:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ